

Զեկուցող՝ Տ. Բարսեղյան
Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ

Երևանի վերջին Գլխավոր հատակագիծը մշակվել է 2006-2020 թվականների համար՝ որպես մայրաքաղաքի տարածական զարգացման հիմք:

2010-2011 թթ. մշակվել է գլխավոր հատակագծի ճշգրտման նախագիծ, որտեղ կատարվել են անհրաժեշտ շտկումներ և լրացվել քաղաքի զարգացմանն ուղղված նոր մոտեցումներով:

Ելնելով Երևանի առկա իրավիճակից և զարգացման առաջնահերթություններից՝ առանձնանում են հետևյալ գերակա ուղղությունները.

1. քաղաքի համաչափ զարգացում
2. մայրաքաղաքային գործառույթների հստակեցում
3. Երևան-քաղաքամերձ գոտի-ագլումերացիա քաղաքաշինական գործառույթներ
4. քաղաքի կառուցապատման ամբողջականացում և արդիականացում
5. պատմամշակութային հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանում և օգտագործում
6. արդյունաբերական գոտիների և արտադրական օբեկտների օպտիմալացում
7. ճանապարհափողոցային ցանցի զարգացում
8. հասարակական հանգստի կենտրոնների բարելավում
9. բնակելի ֆոնդի նորացում և արդիականացում
10. ինժեներական ենթակառուցվածքների և հաղորդակցուղիների արդիականացում, անհրաժեշտ հզորությունների ստեղծում
11. բնակչության սակավաշարժ խմբերի քաղաքաշինական միջավայրում մատչելիության Ապահովում

1. Երևան քաղաքի համաչափ զարգացումը ենթադրում է՝

Հիմնական նպատակն է ապահովել քաղաքաշինական գործունեության միջավայրի զարգացմանն ուղղված հավասարաչափ բարենպաստ և ներդաշնակ պայմաններ քաղաքի ողջ տարածքում՝ աշխատանքի, բնակչության, հանգստի, ժամանցի և սպասարկման համար:

Հիմնական խնդիրներն են՝

- համաքաղաքային կենտրոնի և քաղաքի բոլոր վարչական շրջանների հավասարաչափ զարգացման սկզբունքների և մոտեցումների ձևավորում և իրականացումը
- Երևան – քաղաքամերձ գոտի ագլումերացիա համակարգի տարածքների սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված համատեղ նպատակահարմար քաղաքաշինական գործառույթների իրականացման անհրաժեշտ նախապայմանների և մեխանիզմների ստեղծումը,
- Երևանի փոքր կենտրոնից գործառնական կախվածության մեղմացումը,
- տարածական բոլոր ենթակառուցվածքների կայունացման և օպտիմալացման քաղաքաշինական նախադրյալների առաջադրումը:

Նախագծային լուծումների նկատմամբ անհրաժեշտ գործողություններն են՝
ա/ քաղաքի և առանձին վարչական շրջանների առկա իրավիճակի և զարգացման ու արդիականացման հնարավորությունների վերլուծությունն և գնահատումը /տարածքային պայմաններ, բնակչություն, ենթակառուցվածքներ, այլ անհրաժեշտ ցուցանիշներ/, ներառելով՝

- Երևանի վարչական շրջանների վարչահասարակական, մշակույթի, մարզական գոտիները, եկեղեցիները, կարևոր առևտրական և սպասարկման նշանակության օբյեկտները,
- համապետական, համաքաղաքային և տեղական նշանակության օբյեկտները,
- Երևանի վարչական կենտրոնի տեղաբաշխումը,
- հատուկ նշանակության օբյեկտները,
- ուսումնական հաստատությունների տեղաբաշխումը,
- բնակելի կառուցապատումը,
- ընդհանուր օգտագործման և բակային տարածքները,
- զբոսաշրջային ռեսուրսները, այդ թվում նաև պատմական տարածքները,
- հուշարձանները, տեսարժան վայրերը,
- արտաքին ձևավորումը և գովազդը,

բ/ համաքաղաքային կենտրոնի գնահատումը՝

- մայրաքաղաքային գործառույթների զլոբալ քաղաքի միջազգային ստանդարտներին համապատասխանեցման և տարածական հատակագծային զարգացումը,
- Երևանի փոքր կենտրոնի առանձնահատկությունների տարանջատումը.
Վարչական կենտրոնների մշակութային և սպասարկման կենտրոնների, առանձնահատկություններից ելնելով որոշակի թեմատիկ կերպարի ձևավորումը,
- հասարակական կառուցապատման հնարավոր գոտիները,
- պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների շենքերի տեղաբաշխման նպատակահարմարությունը,
- փողոցատրանսպորտային ցանցի կանոնակարգման և քաղաքային տրանսպորտի բարելավման նախադրյալների ձևակերպումը,
- զբոսայգիների բարեկարգման և դրանց գործունեության ակտիվացման սկզբունքների մշակումը,
- Երևանի կենտրոնի տարածական զարգացման և փոքր կենտրոնի ծրագրի ներդրման միջոցառումների ձևավորումը,
- զբոսաշրջային ռեսուրսների /պատմական տարածքներ, հուշարձաններ, հյուրանոցներ, հասարակական սննդի օբյեկտներ, տեսարժան վայրեր, այլ/, առանձնացումը,
- նոր կառուցապատման, վերակառուցման ու արդիականացման առաջնային ծրագրերի նախապատրաստումը:

2. Երևանի մայրաքաղաքային, այդ թվում միջազգային ճանաչմանն ուղղված գործառույթների հստակեցում

Երևանի կայացումը որպես տարածաշրջանային կենտրոն՝ տնտեսության որոշակի գերակա ուղղություններով, ենթադրում է՝

- ✓ միջազգային ճանաչում
- ✓ միջազգային և տարածաշրջանային շղթայում ազգային հավակնոտ ծրագրեր
- ✓ նոր, եզակի մարտահրավերներ

- ✓ տարածաշրջանային մրցակցային առավելություն
- ✓ Երևանի՝ որպես պետական մեկ քաղաքաշինական միավորի դիտարկում

Այստեղ շատ կարևոր է ձևավորել Երևանի կառավարման և զարգացման քաղաքաշինական նոր հայեցակարգ՝ միջազգային չափանիշներին համապատասխան անկախ պետության մայրաքաղաքի զարգացման հեռանկարային հիմնական գործառույթներով:

3. Երևան - քաղաքամերձ գոտի ագլոմերացիա քաղաքաշինական գործառույթների կարգավորում

Երևանի ագլոմերացիան ընդգրկում է այն տարածքները, որոնք անմիջական կապ ունեն քաղաքի և նրա բնակչության կենսագործունեության հետ: Ագլոմերացիայում առանձնացված են ստորև բերված գոտիները՝ օգտագործման համապատասխան վարչակարգերով.

1. սահմանափակ զարգացման գոտի
2. մեղմ զարգացման գոտի
3. գերիշխող զարգացման գոտի
4. բնապահպանական գոտիներ
5. սահմանամերձ գոտի:

Երևանի քաղաքամերձ գոտի. Այս մասով անհրաժեշտ է հաշվի առնել.

- Երևան քաղաքի քաղաքամերձ գոտու տարածքային հատակագծման նախագծով առաջադրված սահմանները և նրանց հատակագծման նախագծերի տրանսպորտային մասի համապատասխանեցումը:

4. Քաղաքի կառուցապատման ամբողջականացում և արդիականացումը ենթադրում է.

- ա./ թաղամասերի ավարտուն կառուցապատման ծրագրի մշակում
- բ./ կառուցապատման իրավիճակի գույքագրում
- գ./ զարգացման ու արդիականացման հնարավորությունների գնահատում
- դ. / մշակութալեկենցաղային նշանակության կառույցների և տարածքների ներդրումային ծրագրերի կազմում, ինչպիսին են՝
 - Ս. Զորյան, Ալ. Սպենդիարյան, Մոսկովյան,
 - Մաշտոց, Կորյունի, Գ. Քոչար և Իսահակյան,
 - Մաշտոց, Փ. Բուզանդ, Ե. Կողբացի, Քոչինյան, Ամիրյան,
 - Մաշտոց, Պարոնյան, Լեո և Սարյան
 - Կոնդ և «Կոզեռն» փողոցներով կազմված թաղամասերը:


5. Պատմամշակութային հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանում և օգտագործում

2006 թվականին մշակվել է «Երևան քաղաքի պատմամշակութային հուշարձանների պահպանման հիմնավորման ծրագիրը և սխեման»:

Նախագծում Երևան քաղաքի հուշարձանների և նրանց շրջապատող միջավայրերի ներդաշնակ փոխկապվածությունն ապահովելու նպատակով մշակվել են տարբեր նշանակության պահպանման գոտիների համակարգ, որոնք իրենց մեջ ներառել են.

- ա/ հուշարձանների պահպանության գոտիները
- բ/ կառուցապատման կարգավորման գոտիները

զ/ լանդշաֆտի պահպանման գոտիները, որտեղ սահմանվել է օգտագործման պայմանակարգը /ռեժիմը/:



Հուշարձանների պահպանական գոտիների տարածքների պահպանման և օգտագործման համար սահմանվել է դրանց գործառնական օգտագործում, և այդ տարածքներում իրականացվող տնտեսական, բարեկարգման, կառուցապատման, վերակառուցման և այլ շինարարական աշխատանքների համար որոշակի սահմանափակումների պայմաններ:

Նախագիծը պետք է հանդիսանա քաղաքաշինական գործունեության և հողօգտագործման ժամանակ առաջացող բոլոր հարցերի ու վեճերի լուծման հիմնական իրավական միջոցը, որպես քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ՝ պետք է հիմք հանդիսանա տարածքների փաստացի և հեռանկարային օգտագործման փաստաթղթերի մշակման համար:

Հուշարձանների պահպանման գոտիների նախագծի հիմնական նպատակներն են.

- քաղաքի զարգացման ընթացքում առողջ և գրավիչ միջավայրի ձևավորման ապահովումը,
- կազմավորված և պատմաճարտարապետական արժեք ներկայացնող հատվածների վերակառուցման, վերանորոգման և վերականգնման խրախուսումը՝ պատմական միջավայրի առանձնահատուկ ճարտարապետական կերպարի պահպանմամբ,
- քաղաքաշինական կազմավորված միջավայրին համահունչ՝ գեղագիտական քաղաքականության վարման ապահովումը,
- պատմամշակութային հուշարձանների պահպանման և դրանց առավել շահեկան օգտագործման ու նպաստավոր պայմանների ստեղծման ապահովումը,
- պահպանական գոտիներում գտնվող հուշարձանների, դրանց շրջապատող տարածքների, հնավայրերի, ինչպես նաև բնական և արհեստական լանդշաֆտի

վերականգնման, պահպանման ու հետագա օգտագործման միջոցառումների իրականացումը,


- պահպանական գոտիներում միջավայրի գեղագիտական ամբողջական կերպարը խաթարող կառույցների աստիճանական վերացումը և որոշ սահմանափակումների կիրառումն արդեն գոյություն ունեցող տարբեր սեփականատերերին պատկանող անշարժ գույքի նկատմամբ:

6. Արդյունաբերական գոտիների և արտադրական օբյեկտների օպտիմալացում

Երևանում խորհրդային տարիներին բազմաթիվ արտադրական նշանակության օբյեկտներ են ստեղծվել ոչ միայն քաղաքի արդյունաբերական հանգույցներում, այլ նաև կենտրոնական հատվածում:

Նկատի ունենալով նոր և էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների ներդրումը արտադրության ինտենսիվ զարգացման գործընթացում, հաշվի առնելով կառուցապատման համար անհրաժեշտ քաղաքային հողատարածքների սակավությունը, ինչպես նաև միջազգային փորձը՝ տրամաբանական անհրաժեշտություն է առաջանում նշված գոտիների առավել ռացիոնալ օգտագործման նպատակով վերանայելու դրանց գործառնական նշանակությունը, որի հետ կապված առաջարկվում է՝

- արդյունաբերական հանգույցները վերակազմավորել որպես առավել արդյունավետ տեխնոպարկեր,
- ստեղծել բնակելի, հասարակական, մշակութային, ժամանցի և այլ նշանակության նորագույն քաղաքաշինական կազմավորումներ,
- առանձին արտադրական օբյեկտները վերակառուցել որպես բիզնեսի, առևտրի, սպասարկման, արվեստի և ժամանցի մոդեռն կենտրոններ:



7. Ճանապարհափողոցային ցանցի զարգացում

Քաղաքի ճանապարհափողոցային ցանցի հիմքը կազմավորում են մայրուղային փողոցներն ու ճանապարհները, որոնք իրենց վրա են վերցնում հիմնական տրանսպորտային հոսքը:


Երևանի ճանապարհափողոցային ցանցի բարելավման ուղղությամբ կարևորվում է երեք հիմնական ուղղություն՝

ա./ քաղաքի կենտրոնի բեռնաթափում

բ./ քաղաքի կենտրոնի ճանապարհափողոցային ցանցի բարելավում

գ./ Երևանը շրջանցող մայրուղային ճանապարհների կազմակերպում:

Երևանի կենտրոնը տարանցիկ տրանսպորտի միջոցներից բեռնաթափելու նպատակով ներկայումս նաև Ասիական զարգացման բանկի հետ ընթանում են աշխատանքներ՝ Երևանի կենտրոնը շրջանցող մի քանի մայրուղիների և դրանց առանձին հանգույցների նախագծման, կառուցման և վերակառուցման ուղղությամբ:



8. Հասարակական նշանակության հանգստի կենտրոնների բարելավման առումով

Արդի փուլում լիարժեք հանգստի կենտրոնների ձևավորման հիմնական երաշխիք է դառնում քաղաքի կառուցվածքահատակագծային համակարգում միջազգային պահանջներին համապատասխան նոր հասարակական հանգստի կանաչ տարածքների հավասարակշռված զարգացումը՝ թելադրված Երևանի Գլխավոր հատակագծի նախագծի հիմնադրույթների ճշգրտման արդիականացման հրատապությամբ:

Նախատեսված են Թումանյանի անվան, «Փարոս» ռեստորանի հարակից տարածքի, Եռաբլրի մեմորիալ համալիրի, Դավթաշենի, Հրազդանի կիրճի, Արաբկիրի, Հաղթանակի, Բուսաբանական և Կենդանաբանական այգիների, Ջրաշխարհին հարող տարածքի, Ծիծեռնակաբերդի համալիրի, Գլխավոր պողոտայի և Օդակաձև զբոսապուրակի որոշ հատվածների, Մանկական երկաթուղու, Չորագյուղ ազգագրական թաղամասի, Պանթեոնի տարածքի վերակառուցման և Տիչինայի անտառպուրակի հիմնման աշխատանքները:

Ներկայումս ակտիվ գործընթացում են գտնվում հետիոտն փողոցների, այգիների և զբոսայգիների նախագծային և շինարարական աշխատանքները: Միայն 2014թ. նախատեսվել

և իրականացվում են Հյուսիսային պողոտայի, Կիրովի անվան մանկական այգու, Պանթեոնի մի հատվածի, Գլխավոր պողոտայի Նալբանդյան-Հանրապետության փողոցների հատվածի, Ազատամարտիկների այգու, Կենդանաբանական այգու որոշ հատվածի վերակառուցման աշխատանքները:

9. Բնակելի շինարարության ոլորտում համայնքի հիմնական խնդիրներ են հանդիսանում.
բնակելի ֆոնդի արդիականացումն ու սեյսմոզինվածության բարձրացումը, որը ներառում է.

- խիտ բնակեցված տարածքներում բնակչության խտության պակասեցումը,
- վթարային մաշվածության բարձր աստիճանի խարխուլ բնակելի տներով և առաջին սերնդի տիպարային շենքերով կառուցապատված տարածքների վերակառուցումը և արդիականացումը,
- բնակելի թաղամասերի ավարտուն կառուցապատումը,
- սոցիալական նշանակության բնակարանների կառուցման մեխանիզմների ձևավորումը,
- անավարտ շինարարության խնդրի լուծումը սեփականատերերի ուժերով,
- բակային տարածքների բարեկարգումը, կանաչապատումը, մարզական և այլ խաղահրապարակների ստեղծումը, ավտոկայանատեղերի հիմնախնդրի լուծումը:

10. Քաղաքային տնտեսության բավարար կենսագործունեության համար պարտադիր պայման է ինժեներական ենթակառուցվածքների և հաղորդակից ուղիների հագեցվածությունն ու անհրաժեշտ հզորությունների ապահովումը. ինչպես նաև դրանց հաղորդակցուղիների ցանցերի անխափան աշխատանքը:

11. Եվ վերջապես հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի քաղաքաշինական միջավայրում մատչելիության ապահովման առումով նախատեսվում են՝

- ա) երկաթուղային, ավտոբուսային հանգուցային կայարանների և օդանավակայանների վերասարքավորում,
- բ) հաշմանդամներին փոխադրող տրանսպորտային միջոցների հատուկ հարմարանքներ,
- գ) երթևեկության նախապես սահմանված գրաֆիկներով հատուկ երթուղիներ,
- դ) տրանսպորտային շարժումից ազատ հետիոտն գոտիների (փողոցներ, հրապարակներ) ստեղծում,
- ե) հասարակական տրանսպորտի կայանների կողքին անհրաժեշտ հաշմանդամների հանգստի համար ծածկված հարթակների նախատեսում:

Երևանի քաղաքաշինական զարգացմանն ուղղված բազմաթիվ ծրագրեր կարող են իրականացվել ճկուն ներդրումային քաղաքականության միջոցով՝ մասնավոր հատվածի և նրա հետ համագործակցության շրջանակներում, այդ թվում՝

Մի շարք խոշոր քաղաքաշինական ծրագրեր, որոնք կարող են իրականացվել այս ճանապարհով:

1. «Երևանի Բերդ» հասարակագործարարական և մշակութային միջազգային համալիրի վերակառուցման ներդրումային ծրագիր



Ծրագրի նպատակը և հակիրճ նկարագիրը. «Երևանի Բերդ» միջազգային համալիրը գտնվում է Երևանի կենտրոնական հարավ-արևմտյան տարածքում՝ Հրազդան գետի կիրճի գոտում:

Տարածքը զբաղեցնում է 164.1 հա: Նախատեսվում է որպես գործարարական, դիվանագիտական և մշակութային միջազգային կենտրոն՝ հիմնականում հասարակական բնույթի կառուցապատմամբ, հանգստի համաքաղաքային նշանակության գոտիով, պատմական, մշակութային և բնական ժառանգության պահպանմամբ:

Նախատեսվող կառուցապատումը դիտարկվում է որպես համաքաղաքային նշանակության բազմաֆունկցիոնալ համալիր, որը կազմավորում է հասարական և զվարճանքի օբյեկտներ և զարգացած գործարարական-բանկային, հյուրանոցային, մարզական համալիրներ, խառը կառուցապատման բնակելի թաղամասեր:

Առաջարկվող ներդրումային ծրագրեր.

- բնակելի կառուցապատում՝ դիվանագիտական ներկայացուցչությունների համար,
- բնակելի կառուցապատման գոտի,
- զբոսաշրջային կենտրոն:

2. Երևանի Տիչինայի փողոցին հարող տարածքի վերակառուցման ներդրումային ծրագիր

Այն նախատեսվում է որպես Դավթաշեն, Աջափնյակ և Մալաթիա-Մեքաստիա համայնքները միավորող Հյուսիս-արևմտյան հատակագծային գոտու կենտրոն:



3. «Մարս» գործարանին հարող տարածքի վերակառուցման ներդրումային ծրագիրը նախատեսվում է Երևանի հյուսիս-արևմտյան մասում՝ զբաղեցնելով 464.5 հա տարածք: Ներկայումս տարածքի զգալի մասը կառուցապատված չէ, այն հիմնականում օգտագործվում է գյուղատնտեսական նպատակներով: Հողային տարածքների մեծ մասը սեփականաշնորհված է, մնացածն օգտագործվում է վարձակալական հիմունքներով: Գործող օբյեկտներից է հիմնականում «Մարս» գործարանը, որի տարածքում գտնվող մասնաշենքերը մասնակիորեն են գործարկված: Գործարանին կից ժամանակին կատարվել էր հարակից բուլվարային տիպի տարածքի և գետնանցումների կազմակերպում, որոնք այսօր գտնվում են բարձիթողի վիճակում: Ծրագրի կորիզն է կազմում «տեխնոպոլիսի» կազմակերպման գաղափարը՝ ներդրողների համար տարածքի գրավչությունը բարձրացնելու համար և հաշվի առնելով ինովացիոն տեխնոլոգիաների ներդրման համար նախատեսված «Մարս» գործարանի առկայությունը:



4. «ՀԻՆ ԵՐԵՎԱՆ» պատմաճարտարապետական միջավայր.

«Հին Երևան» պատմաճարտարապետական միջավայրը նախատեսված է իրականացնել Գլխավոր պողոտայի տարածքում՝ մոտ 2.2 հա մակերեսով՝ Արովյան, Փ. Բուզանդ, Ե. Կողբացի և Արամի փողոցներով սահմանափակվող թաղամասում:

Թաղամասը վերակառուցելու նպատակը պատմական կառուցապատված տարածքների բարելավումն է, կանոնավոր կառուցապատմամբ արգելոցային գոտու սահմանումը և ներգրավումը քաղաքի կենսագործունեության մեջ: Պատմական կառույցների հիմնական ֆոնդում 19-րդ դարի եւ 20 դարասկզբի բնակելի տների բնօրինակներն են՝ միաձուլված ներքին բակերով և այգիներով: Միաժամանակ կմեծանա տարածքի առևտրական և մշակութային նշանակությունը: Դրանք հարմարավետ սրճարաններ և ռեստորաններ են, որոնք դուրս են գալիս դեպի բաց սրահներ և այգիներ, մասնագիտացված ցուցասրահների և թանգարանների խանութ-սրահներ են, գեղարվեստական սրահներ, ոչ մեծ բարձրակարգ հյուրանոցներ և այլն:



5. «Կոնդ» թաղամասի վերակառուցման ներդրումային ծրագիրը կոչված է հիմնովին վերակառուցելու քաղաքի կենտրոնական թաղամասերից մեկը ինքնատիպ և հարմարավետ թաղամասի՝ բնապահպանական ժամանակակից անվտանգ տեխնոլոգիաների կիրառմամբ:

Այն բազմագործառության համալիր է, որտեղ նախատեսված են բնակելի շենքեր, կրթական և մշակութային կառույցներ, բիզնես կենտրոններ, առևտրի սրահներ, ինչպես նաև ժամանցի և հանգստի ժամանակակից կենտրոններ: Այս տարածքում նախատեսվում է ստեղծել յուրօրինակ մի միջավայր, որը կդառնա նկարիչների, արվեստագետների համար հանդիպման վայր՝ ցուցասրահներով, արվեստանոցներով, վաճառքի կետերով:

Այսպիսով առաջիկա տարիներին նախատեսվում է վերը նշված հիմնական քաղաքաշինական ուղղություններով տարվող հետազոտությունների, վերլուծությունների, հայեցակարգային ու նախագծային մշակումների հիման վրա իրականացնել Երևանն առավել գրավիչ ու ամբողջական տեսնելու հեռանկարային ծրագիրը: